

## CONVENTION DE JUMELAGE

## ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ

### ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ENTRE

l'Ordre des Avocats du BARREAU d'ARMENIE, représenté par Monsieur Simon BABAYAN, Bâtonnier en exercice, d'une part

et

l'Ordre des Avocats du BARREAU de BEYROUTH, représenté par Monsieur Fadi MASRI, Bâtonnier en exercice, d'autre part,

Les parties signataires:

Prenant en considération le prestige, le caractère spécifique de leurs relations et leur intérêt commun,

Considérant que les conversations entre les parties signataires ont permis de constater une parenté de culture et de tradition et la volonté de nouer des liens entre les deux Barreaux,

Considérant que le développement économique exige des outils juridiques adaptés, des professionnels du droit compétents et une connaissance réciproque des pratiques professionnelles,

Considérant l'intérêt pour les deux Barreaux de s'informer sur l'organisation et les conditions d'exercice respectives de leur profession,

Reconnaissant la nécessité de resserrer les liens d'amitié et de fraternité entre les

Հայաստանի փաստաբանների պալատի, ի դեմս նախագահ պարոն Միմոն Բաբայանի, մի կողմից,

և

Բեյրութի փաստաբանանների միության, ի դեմս նախագահ պարոն Ֆադի Մասրիի, մյուս կողմից,

ՄԻՋԵՎ

Ստորագրող կողմերը

Հաշվի առնելով իրենց հարաբերությունների հեղինակությունը, առանձնահատուկ բնույթը և ընդհանուր շահը,

Նկատի ունենալով, որ ստորագրող կողմերի միջև զրույցները հիմք տվեցին արձանագրել մշակույթի և ավանդույթների նմանությունը և երկու միությունների միջև կապեր հաստատելու ցանկությունը,

Նկատի ունենալով, որ տնտեսական զարգացումը պահանջում է համապատասխան իրավական գործիքներ, կոմպետենտ իրավաբան մասնագետներ և մասնագիտական պրակտիկայի փոխադարձ գիտելիքներ,

Նկատի ունենալով երկու փաստաբանական միությունների հետաքրքրությունը՝ ծանոթանալու իրենց մասնագիտության կազմակերպվածության և իրականացման համապատասխան պայմաններին,

Ընդունելով երկու երկրների փաստաբանների և փաստաբանական միությունների միջև բարեկամության և եղբայրության կապերի ամրապնդման անհրաժեշտությունը,

avocats des deux pays et leurs barreaux,

Պայմանավորվեցին հետևյալի շուրջ

Sont convenus:

1. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ  
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

1. INFORMATION ET COOPERATION

L'Ordre des Avocats du BARREAU d'ARMENIE et de BEYROUTH procéderont à l'échange d'informations relatives aux règles de droit, aux pratiques judiciaires, aux modifications essentielles du droit et de la procédure intervenant dans chacun des pays et pouvant favoriser le développement de l'activité du barreau.

Ils porteront une attention particulière aux secteurs suivants :

- Accès au droit et aide judiciaire,
- Développement et modernisation du secteur judiciaire,
- Avenir de la profession et l'intelligence artificielle, risques d'utilisation abusive de l'intelligence artificielle dans la pratique du droit
- Droit professionnel relatif aux compétences et/ou à la responsabilité de l'avocat, à l'actualisation de ses droits et de ses devoirs,
- Notion de "périmètre du droit" et donc de concurrence avec d'autres professions,
- Droit des affaires,
- Droit fiscal et fiscalité des entreprises.

Les avocats des deux Ordres pourront, pour mieux échanger leurs informations sur tous sujets intéressant leur profession, organiser

ՀՀ Փաստաբանների պալատը և Բեյրութի փաստաբանների միությունները կշարունակեն տեղեկատվության փոխանակումը իրավունքի, դատական պրակտիկայի, օրենքների և ընթացակարգերի էական փոփոխությունների շուրջ, որոնք տեղի կունենան երկրներից յուրաքանչյուրում և որը կարող է նպաստել միությունների գործունեության զարգացմանը:

Նրանք առանձնահատուկ ուշադրություն կդարձնեն հետևյալ ոլորտներին՝

- հասանելիություն օրենքներին և իրավաբանական օգնությանը,
- Դատական ոլորտի զարգացում և արդիականացում,
- Մասնագիտության ապագան և արհեստական բանականությունը, արհեստական բանականության չարաշահման ռիսկերը փաստաբանական գործունեության շրջանակներում
- Մասնագիտական իրավունք, որը վերաբերում է փաստաբանի հմտություններին և (կամ) պատասխանատվությանը, նրա իրավունքների և պարտականությունների արդիականացմանը,
- «Իրավունքի պարագիծ» հասկացությունը և հետևաբար այլ մասնագիտությունների հետ մրցակցությունը,
- Գործարար իրավունք,
- Հարկային իրավունք և ձեռնարկությունների հարկում:

Երկու միությունների փաստաբանները կարող

des stages ou carrefours de remise à jour ou de spécialisation.

Ils s'obligent à faire tout leur possible pour répondre aux demandes d'informations pratiques émanant des confrères, collaborateurs ou stagiaires inscrits à leurs barreaux respectifs.

Ils s'engagent à favoriser les possibilités de stage ou de formation qui pourraient être offertes par les membres du Barreau d'une ville aux stagiaires et élèves-avocats de l'autre ville.

Ils pourront concourir à l'établissement des relations privilégiées entre les partenaires économiques de chaque ville.

## 2. MOYENS MIS EN OEUVRE

### Article 1

Le Bâtonnier de chaque Ordre désignera deux de ses membres au plus, qui collaboreront au sein d'un Comité d'animation.

### Article 2

Ce Comité s'emploiera à faciliter l'échange d'informations et les modalités de la coopération ci-dessus définie. Ses membres décideront pour chaque pays des thèmes d'intérêt commun justifiant qu'ils soient portés à la connaissance de tous les confrères, par l'intermédiaire des Ordres respectifs.

են իրենց մասնագիտության վերաբերյալ թեմաների շուրջ տեղեկատվությունը ավելի լավ փոխանակելու նպատակով կազմակերպել պրակտիկաներ կամ մասնագիտական հանդիպումներ:

Նրանք պարտավորվում են անել հնարավոր ամեն ինչ՝ պատասխանելու համապատասխան միությունների անդամ գործընկերների կամ վերապատրաստվողների գործնական տեղեկատվության հարցումներին:

Նրանք պարտավորվում են խթանել պրակտիկայի կամ վերապատրաստման հնարավորությունները, որոնք կարող են առաջարկվել մի միության փաստաբանների կողմից մյուս միության վերապատրաստվողներին և փաստաբանական դպրոցի ունկնդիրներին: Նրանք կկարողանան նպաստել համապատասխան քաղաքի տնտեսական գործընկերների միջև արտոնյալ հարաբերությունների հաստատմանը:

## 2. ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԵՂԱԾ

### ՄԻՋՈՑՆԵՐ

#### ՀՈԴՎԱԾ 1

Յուրաքանչյուր միության նախագահ նշանակում է միության անդամներից առավելագույնը երկուսին, ովքեր կհամագործակցեն կազկապերչական հանձնաժողովի շրջանակներում:

#### ՀՈԴՎԱԾ 2

Այս կոմիտեն կձգտի հեշտացնել տեղեկատվության փոխանակումը և վերը նշված համագործակցության մեթոդները: Նրա

Ils choisiront d'un commun accord les sujets devant faire l'objet d'une réflexion générale plus approfondie, devenant ainsi les thèmes de journées d'échanges.

Une journée d'études sur l'un des thèmes qui sera défini par le Comité sera organisée chaque année dans l'une des villes signataires ou dans des autres villes avec lesquelles elles entretiennent des relations de partenariat ou de jumelage, s'il est décidé par le Comité d'animation que l'échange peut s'effectuer dans un cadre élargi.

Cette journée d'études pourra être suivie d'une journée de détente, consacrée à une manifestation culturelle ou sportive, de même qu'à une découverte touristique de la région ou se tient le séminaire.

#### Article 3 - Bibliothèque

En raison de leur culture juridique commune, les parties ont constaté que les ouvrages juridiques constituant les fonds de leurs bibliothèques pouvaient faire l'objet d'échanges. Chaque barreau s'engage à mettre en contact leurs bibliothécaires afin d'en déterminer les conditions. Des codes d'accès numériques peuvent être échangés entre les deux barreaux afin de faciliter les recherches à distance sur les bases de données de chaque bibliothèque.

#### Article 4 - Accueil des jeunes avocats

Les deux Barreaux s'engagent à faciliter

անդամները յուրաքանչյուր երկրի համար կորոշեն ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող թեմաները՝ հիմնավորելով, որ դրանք ներկայացվեն բոլոր գործընկերների ուշադրությանը համապատասխան միությունների միջնորդությամբ:

Նրանք փոխադարձ համաձայնությամբ կընտրեն թեմաները, որոնք հետագայում ավելի խորը ընդհանուր քննարկումների առարկա կդառնան՝ այդպիսով դառնալով փոխանակումների օրերի թեմաներ:

Հանձնաժողովի կողմից սահմանվող թեմաներից մեկի վերաբերյալ ուսումնասիրության օր կկազմակերպվի ամեն տարի ստորագրող քաղաքներից մեկում կամ այլ քաղաքներում, որոնց հետ նրանք ունեն գործընկերային կամ քույրական հարաբերություններ, եթե հանձնաժողովի կողմից որոշվի, որ փոխանակումը կարող է տեղի ունենալ ավելի լայն շրջանակներում:

Այս ուսումնական օրվան կարող է հաջորդել հանգստի օր՝ նվիրված մշակութային կամ սպորտային իրադարձությանը, ինչպես նաև տարածաշրջանի զբոսաշրջային բացահայտմանը, որտեղ անցկացվում է սեմինարը:

#### Հոդված 3 - Գրադարան

Իրավաբանական միասնական մշակույթի շնորհիվ կողմերը նշել են, որ իրենց գրադարանների հավաքածուները կազմող իրավաբանական աշխատանքները կարող են փոխանակման առարկա դառնալ: Յուրաքանչյուր միություն պարտավորվում է կապ հաստատել համապատասխան գրադարանավարների հետ՝ պայմանները որոշելու համար: Թվային մուտքի կողերը

l'accueil des jeunes avocats dans les conditions définies dans chaque réglementation nationale en donnant aux candidatures des jeunes avocats des Barreaux signataires la publicité appropriée.

Les jeunes avocats extérieurs seront reçus dans la mesure du possible dans les familles des confrères invitants.

#### Article 5 - Promotion de l'Eloquence

Les deux Barreaux ont à cœur de promouvoir l'éloquence et à travers celle-ci, le jeune barreau.

Ils coopéreront ainsi dans l'organisation et/ou la participation à un ou plusieurs concours d'éloquence auxquels pourront le cas échéant participer les représentants d'autres barreaux avec lesquels l'un des signataires a des liens privilégiés par ailleurs.

#### Article 6- Solidarité- Défense de la défense

De manière générale, les Barreaux travailleront à des actions de solidarité, à leur profit et à travers eux, au profit de leurs membres, ou en faveur de toute autre cause qu'ils pourront définir d'un commun accord. Ils seront par ailleurs vigilants à la défense de la défense et favoriseront toute action destinée à soutenir des confrères menacés.

#### Article 7

Cette convention est conclue pour une durée de trois ans renouvelable tacitement. Elle peut être dénoncée en observant un délai de

կարող են փոխանակվել երկու գրադարանների միջև՝ հեշտացնելու հեռավոր որոնումները յուրաքանչյուր գրադարանի սվյալների բազայում:

Հոդված 4. Երիտասարդ իրավաբանների ընդունելություն

Երկու փաստաբանական միությունները պարտավորվում են նպաստել երիտասարդ իրավաբանների ընդունելությանը յուրաքանչյուր դեպքում ազգային կանոնակարգով սահմանված պայմաններին համապատասխան՝ պատշաճ ընթացք տալով ստորագրող միությունների դիմումներին:

Երիտասարդ փաստաբաններին հնարավորության դեպքում կհյուրընկալեն իրավիրող գործընկերների ընտանիքներում:

Հոդված 5. Հոետորության խթանում

Երկու միություններն էլ հավատարիմ են հոետորությունը խթանելուն և այդ ճանապարհով երիտասարդ փաստաբաններին աջակցելուն: Նրանք այսպիսով կհամագործակցեն մեկ կամ մի քանի հոետորության մրցույթներին կազմակերպմանը և/կամ մասնակցելուն, որոնց կարող են մասնակցել նաև այլ միությունների ներկայացուցիչներ, որոնց հետ ստորագրողներից մեկն ունի արտոնյալ կապեր:

Հոդված 6 - Համերաշխություն - Պաշտպանության պաշտպանություն

Ընդհանուր առմամբ, փաստաբանական միությունները կաշխատեն համերաշխության ակցիաների շուրջ՝ ի շահ իրենց և նրանց

préavis de six mois.

Elle est rédigée en français et en arménien.

En cas de divergence entre les deux versions, la version française prévaudra.

Elle prendra date et entrera en vigueur le jour de sa ratification par les deux Conseils de l'Ordre.

միջոցով, ի շահ իրենց անդամների կամ ի նպաստ ցանկացած այլ գործի, որը նրանք կարող են սահմանել փոխադարձ համաձայնությամբ:

Նրանք նաև զգոն կլինեն պաշտպանության պաշտպանության հարցում և կխրախուսեն ցանկացած գործողություն, որը նպաստակ ունի աջակցելու սպառնալիքի տակ գտնվող գործընկերներին:

Հոդված 7

Սույն պայմանագիրը կնքվում է մեկ տարի ժամկետով, երկարաձգման հնարավորությամբ: Այն կարող է չեղյալ հայտարարվել՝ վեցամսյա ծանուցման ժամկետի պահպանմամբ: Գրված է ֆրանսերեն և հայերեն: Երկու տարբերակների միջև անհամապատասխանության դեպքում գերակայելու է ֆրանսերեն տարբերակը:

Այն թվագրվելու և ուժի մեջ կմտնի երկու միությունների խորհուրդների կողմից վավերացնելու օրվանից:

Le 23 avril 2025 à Erevan

Fadi MASRI

Bâtonnier du Barreau de BEYROUTH

Simon BABAYAN

Bâtonnier du Barreau d'Arménie

ք. Երևան

23 ապրիլի 2025թ.

Ֆադի Մասրի

Բեյրութի փաստաբանների միության նախագահ

Միոն Բաբայան

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ